«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ « Հայոց պատմություն առարկայի դերը 9-րդ դասարանում ազգային դաստիարակության գործընթացում»

ԱՌԱՐԿԱ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Զաբել Միրզոյան Աշոտի

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն.....2

Գլուխ 1. Ազգային դաստիարակության դերն ու նշանակությունը.....4

Գլուխ 2. 9-րդ դասարանցիների ազգային դաստիարակության վրա Հայոց Պատմություն առարկայի ազդեցությունը.....9

2.1 Հայոց Պատմություն առարկայի դերն ու նշանակությունը հանրակրթության ոլորտում.....9

2.2 Հայոց պատմության դերը 9-րդ դասարանցիների ազգային կրթության մեջ.....11

Եզրակացություն.....15

Օգտագործված գրականություն և աղբյուրներ.....16

Ներածություն

Արդիականություն: Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամենահիմնարարն ու տարողունակը»: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները[1]: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, դրա տարբեր ինտիտուտների այդ թվում նաև դպրոցի վրա:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել 9-րդ դասարանցիների ազգային դաստիարակության գործընթացում Հայոց պատմություն առարկայի դերը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վեր հանել ազգային դաստիարակության դերն ու նշանակությունը:
2. Ուսումնասիրել ազգային դաստիարակությունը Հայոց պատմություն առարկայի շրջանակներում:
3. Հետազոտել 9-րդ դասարանցիների ազգային դաստիարակության վրա Հայոց ս պատմություն առարկայի ազդեցությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության շրջանակներում վեր հանված հիմնախնդիրները կիրառելի կլինեն մանկավարժների համար ազգային դաստիարկաության շրջանակներում տարվող աշխատանքներում:

[1] И. К. Кучмаева, Культурное наследие. Современные проблемы, М., 1987, с.12.

Հետազոտության մեթոդների մեջ ներառվել է պատմական, համեմատության, վերլուծության, համադրման, ինդուկցիայի մեթոդները:

Հետազոտությունը կառուցված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

Գլուխ 1. Ազգային դաստիարակության դերն ու նշանակությունը:

Լիարժեք էթնոկրի անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով և սկսած տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով ու ավարտած մարդկային մտածելակերպի բարդ և անկառավարելի փոփոխություններով: Այս տեսանկյունից 21-րդ դարն էլ բացառություն չէ: Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը, Արցախյան գոյամարտը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններն ունեցան իրենց տխուր հետևանքները՝ պարարտ հող ստեղծելով բացասական տարաբնույթ երևույթների աշխույժ գործունեության համար: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվեցին երկրորդական պլան. դյուրին և հեշտընկալ դարձան համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասական ազդեցություն ունեցան երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա:

Ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները: Այսինքն՝ էթնոմշակութային առանձնահատկությունները որոշ չափով մղվել են հետին պլան՝ վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին տեղեկատվության համար: Վերոնշյալ խնդրի հաղթահարման գործը դրված է նոր սերնդի ուսերին: Որքան փոփոխական են խնդիրները, այնքան կայուն է դրանք լուծելու անհրաժեշտությունը: Ուստի այս սերունդը տարբերվում է ոչ միայն առաջադիր խնդիրներով, այլև վերջիններս հաղթահարելու եղանակներով ու արդյունքներով: Հետևաբար, արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական-տնտեսական և շուկայական հարաբերություններն ու

օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը:

Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը: Ինչպես նշում է գերմանացի գիտնական Դյուրկհեյմը, «հիշյալ սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է»1, որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը[2]:

Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը՝ որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք: Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ներընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ գալիք սերունդներին՝ նրանց մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի: Ինքնության հարցը ներընտանեկան միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում է հենց ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվին տիրապետելու, պապենական արմատները ճանաչելու, Հայ առաքելական եկեղեցու պատկանելության և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում[3]: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմեր, կանոններ, իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր

[2] www.Grandars.ru/socologiya/swcologiya-Dyukgema.html.
[3] Ա. Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Եր., 2003, էջ 29

ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, նախասիրություններով, կողմնորոշումներով, և ավագ սերնդի կողմից ընդունված հասարակական կյանքի որոշ նորմեր կարող են տարբերվել հաջորդ սերնդի հայացքներից: Վերջիններս արագ հարմարվում են նոր իրավիճակին՝ ձևավորելով արժեքային նոր համակարգ, որը արմատապես կարող է տարբերվել նախորդից: Ինչ խոսք, հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները: Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝ անհրաժեշտ է առաջնայնությունը տալ ազգայինին:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Մարդը ծնված օրից ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, ավանդույթները, մշակույթը, հոգեբանությունը, և բազմաթիվ այլ որակներ, որոնք աստիճանաբար ձևավորվելով, անձին դարձնում են տվյալ ազգի լիարժեք անդամ: Այդ գործընթացն ազգային դաստիարակությունն է, որը տեղի է ունենում հիմնականում դաստիարակության նպատակներ չհետապնդող, բայց միշտ էլ այս կամ այն գործունեությամբ: Իսկ գործունեությունը միշտ էլ դաստիարակում է իր սուբյեկտին՝ պայմանավորված գործունեության բովանդակությամբ: Սա է դաստիարակության կամ որ միևնույնն է, մարդու ձևավորման ու սոցիալականացման հիմնական օրենքը[4]: Ազգային դաստիարակությունը ևս ենթարկվում է այդ օրենքին, սակայն կարող է գործել և ի վնաս ազգի կամ ազգայինի ու համամարդկայինի: Ընդհանրապես, իրական կամ ճիշտ ըմբռնված ազգայինը իրական և ճիշտ ըմբռնված համամարդկայինի մասն է:

Դաստիարակության միջոցով զարգացնելով անհատին զարգացնում ենք մարդկությունը, որի անդամներն են անհատ անձնավորություններն ու ազգերը:

[4] Մանուկյան Ս., Ստավոր գործունեության ձևերը կրթության բովանդակության կազմում, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2000, 79 էջ:

Անհատի զարգացումը կախում ունի ազգերի, իսկ վերջիններիս զարգացումն էլ՝ մարդկության զարգացման աստիճանից: Հայեցի դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներ չյուրացրած հայը չի կարող իր ազգի լիարժեք անդամը լինել: Ահա թե ինչու հայ դպրոցի, առհասարակ, հայեցի դաստիարակության կարևորագույն խնդիրն է ապահովել ազգայինի և համամարդկայինի միաձուլումը: Այս առումով կարևոր է համակարգված դաստիարակությունը տարբերել ոչ համակարգվածից: Բանն այն է, որ դրանցից յուրաքանչյուրը յուրովի մոտեցում է պահանջում: Համակարգված կարելի է համարել ընտանիքում, որոշակի հաստատություններում իրականացվող դաստիարակությունը: Ոչ համակարգված դաստիարակությունը դրանցից դուրս է և ընդգրկում է տարածքային ու ժամանակային առավել մեծ տարողություններ: Ոչ համակարգված դաստիարակությունը, որը Լ. Շանթն «անվար» է անվանում, որոշակի պահանջներ է առաջադրում պետական ամենատարբեր կառույցներին, քանի որ խոսքն այս դեպքում ժողովրդական զանգվածների ամենօրյա գործունեությանն է վերաբերում:

Հայերիս համար մտահոգիչ է այն հարցը, թե ինչպես մտնել համամարդկային գործընթացի մեջ չկորցնելով մեր մշակույթի հոգևոր արժեքները: Վերջին ժամանակներս իրեն զգացնել էր տալիս մի ծայրահեղ դիրքորոշում, համաձայն որի, դպրոցի ազգայնացումը ներկայացվում էր սոսկ որպես մայրենի լեզվով իրականացվող ուսուցում, իսկ օտար լեզուն որևէ առնչություն չպետք է ունենար մայրենիի դասավանդման հետ: Սակայն սթափվելը ժամանակին եղավ, և ձևավորվեց այն համոզմունքը, ըստ որի, ազգային դպրոցը միայն մայրենի լեզվով ուսուցում չէ: Չկան ազգային քիմիա, ֆիզիկա և այլ գիտություններ: Ազգային դպրոցը մի այնպիսի կառույց է, որը ձևավորում է խելացի, բանիմաց, նախաձեռնող և ստեղծագործող շրջանավարտներ, իր ժողովրդի հոգևոր արժեքները յուրացրած և դրանք կատարելագործելու ընդունակ սերունդ: Այդ դպրոցում ուսումնական բոլոր առարկաները հնարավորության սահմաններում հագեցվում են ազգային ոգով, և հայ երեխան ամեն մի առարկայի մեջ տեսնում է համամարդկայինի ավանդը:

Այս հարցը քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հետևյալ հանգամանքին: Միշտ էլ շրջանառության մեջ է գտնվել այն գաղափարը, համաձայն որի, լավ հիմքերի վրա դրված կրթությունը, որը նպաստում է ժողովրդի մակարդակի բարձրացմանը, համապատասխանում է ժամանակի պահանջներին, արդեն ազգային է: Լիարժեք կրթության շնորհիվ է հնարավոր հասնել այն բանին, որ ազգն ունենա ընդհանուր կամք տիրանալու իր նախնիների կերտած հայրենիքին, տեր կանգնելու իր անցյալի հաջողություններին ու անհաջողություններին, հաղթանակներին ու պարտություններին, իր երջանիկ ու դժբախտ օրերին՝ ձգտելով ունենալ ընդհանուր կամք ապագայի նկատմամբ' կերտելու նոր ապագա[5]:

Քաղաքակիրթ ազգերի մտահոգության առարկան ազգային դաստիարակությունն է, ուստի հայերը ևս պետք է մտահոգվեն այս կարևոր խնդրով: Սակայն ազգային դաստիարակությունը չպետք է մոռանա, որ «դաստիարակությունը պիտի պատրաստի լրիվ և կատարյալ մարդ»: Ընդհանրապես, անցյալի հայ մանկավարժագետները մշտապես ընդգծել են, որ չի կարելի ազգի դաստիարակությունը սահմանափակել միայն ազգային» բովանդակություն ունեցող կրթությամբ:

[5] Լփնասյան , Մանկավարժական հիմունքներ, Թավրիզ, 1991,420 էջ:

Գլուխ 2.

9-րդ դասարանցիների ազգային դաստիարակության վրա Հայոց Պատմություն առարկայի ազդեցությունը:

2.1 Հայոց Պատմություն առարկայի դերն ու նշանակությունը հանրակրթության ոլորտում:

«Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը[6]:

Պատմությունը ազգի կենսագրությունն է, նրա կենսափորձը: Եվ պատմությունը այնքանով է ազգային մշակույթի ամբողջության մաս, որքանով ազգն ինքն է կերտում իր պատմությունը և ինքն էլ բանականորեն վերապրում է այն՝ որպես կենսափորձ կուտակելով իր մեջ առասպելների ձևով:

Որպես կենսափորձ, ամեն մի ազգի պատմությունը յուրահատուկ է: Եվ հենց այդ յուրահատկությամբ Հայոց Պատմությունը պիտի դասավանդվի ազգային դպրոցում: Ըստ որում, Հայոց Պատմությունը հայ երեխաների համար պետք է լինի ոչ թե լոկ գիտելիքների աղբյուր, այլ՝ ազգային կենսափորձի յուրացման աղբյուր:

Ըստ այդմ, դպրոցում ազգային պատմության ուսուցումը չպետք է նույնացվի պատմագրության ուսուցման հետ: Անշուշտ, պատմագրությունն իր դեր ունի որպես պատմության գիտական մեկնաբանություն: Բայց նախ՝ պատմագրությունը կախման մեջ լինելով անհատական գաղափարներից, մտածելակերպից, կարող է և հարազատորեն չարտահայտել ազգի իրական պատմությունը: Եվ ապա

[6] https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf

պատմագրությունը առավել նկարագրական և իմացական նշանակություն ունի և չի նպաստում կենսափորձի ձևավորմանը հայ երեխաների մեջ:

Ուստի պատմագրությունը դպրոցում ազգային պատմության դասավանդման մաս է կազմում միայն: Հայոց Պատմության ուսուցումը անպայման սկսվում է ազգային դիցաբանությամբ: Ազգային առասպելների միջոցով հայ երեխան ծանոթանում է իր ծագումին, իր ազգի կենսաձևին, նրա որակական հարաբերություններին և իր մեջ կուտակում է այդ բոլորը որպես ազգային կենսափորձ:

Հայոց պատմություն առարկայի շնորհիվ է սովորողը տեղեկանում իր նախնիների անցած պատմական ուղու մասին: Հիմնական դպրոցի VII-IX դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրն ընդգրկում է Հայաստանի 3 և հայ ժողովրդի՝ Ք.ա. IX դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածի պատմությունը: Հիմնական դպրոցում սովորողները՝ Հայոց պատմության ծրագրի շրջանակներում կծանոթանան հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին: Հանրակրթական միջին դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում դրվել է գծային մոդելը, պահպանված է ժամանակագրական հաջորդականության սկզբունքը: Ավագ դպրոցում՝ Հայոց պատմության ծրագրի կազմման հիմքում շեշտը դրվելու է արդի աշխարհում առկա խնդրահարույց թեմաների ուսումնասիրության՝ դրանց պատճառա-հետևանքային կապերի վեր հանման և քննադատական վերլուծության մեթոդի վրա: Պատմության հետազոտման վերոնշյալ սկզբունքները կնպաստեն սովորողի կողմից պատմությունը համակողմանի ուսումնասիրմանը, պատմական գործընթացների և դերակատարների ամբողջական ընկալմանը (ոչ միայն քաղաքական ու տնտեսական վերնախավի ուսումնասիրմանը), որն էլ կնպաստի լայն մտահորիզոն և քննադատական մտածողություն ունեցող անձի ձևավորմանը: Ծրագիրը կառուցվել է հետևյալ չորս հիմնական հասկացությունների շուրջ.

1. Պետություն,

2. Ինքնություն,

3. Մշակույթ,

4. Համակեցություն[7]:

2.2 Հայոց պատմության դերը 9-րդ դասարանցիների ազգային կրթության մեջ:

«Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչների Հայեցակարգ բաժնում հիմնավորվում է առարկայի անհրաժեշտությունն հիմնական դպրոցում: Ներկայացվում է, թե ինչ խնդիրներ կարող է լուծել առարկան: Ինչ հմտություններ, որակներ կարող է փոխանցել սեփական պատմության իմացությունը սովորողին:

Հիմնական դպրոցի ավարտական դասարանում աշակերտները ուսումնասիրում են Հայոց պատմության նորագույն շրջանը ՝ սկսելով 1918թ. Մայիսյան փառահեղ հաղթանակներից ՝ հասնելով մեր օրեր:

Դասագիրքը ներառում է հետևյալ բաժինները՝

1. Հայաստանի Առաջին Հանրապետությունը (1918թ. մայիսի 28- 1920թ. դեկտեմբերի 2)
2. Խորհրդային Հայաստանը և հայկական սփյուռքը 1920-1945թթ.
3. Խորհրդային Հայաստանը և հայկական սփյուռքը 1945-1991թթ.
4. Հայաստանի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և հայկական սփյուռքը 1991թվականից մինչև մեր օրեր[8]:

Դասագրքում ներառված թեմաները կարևորագույն դեր ունեն ազգային դաստիարակության մեջ, քանի որ դրացում ներկայացված է Հայոց Պատմության նորագույն շրջանի վերելքներն ու վայրէջքները: Դասագիրքը պատանիներին ծանոթացնում է Մայիսյան հերոսմարտերի, անելանելի թվացող պայմաններում 6 դար հետո հայոց պետականության կերտման հետ:

---

[7] https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf

Էդիկ Գևորգյան, Կարեն Խաչատրյան, Ամատունի Վիրաբյան, Հայոց պատմություն. 9-րդ դասարան, 2019, Երևան

9-րդ դասարանցիները ուսումնասիրում են համաշխարհային քաղաքական կարևոր գործընթացներում՝ խորհրդայնացման և Երկրորդ Համաշխարհային պատերազմում Հայաստանի և հայերի մասնակցությունը և դերը: Այնուհետ անցում են կատարում 1988 թվականին սկսած Ղարաբաղի շարժմանը, երկրաշարժի և Խորհրադային Միության փլուզման հետևանքով ստեղծված դժվարագույն պայմաններին: Հարկ ենք համարում նշել, որ ներկա պայմաններում դասագիրքում ներառված Արցախի ազատագրական պատերազմի թեման մեծ ազդեցություն ունի պատանիների ազգային դաստիարակության վրա: Դասագրքում ներկայացված է թե նման դժվար պայմաններում, ինչպես հնարավոր եղավ ազատագրել Արցախը և կառուցել նոր հանրապետություն:

9-րդ դասարանում Հայոց պատմության առարկայի շրջանակներում կիրառվում են մի շարք մեթոդներ ՝

1. 9-րդ դասարանում պատմությամ նկատմամբ աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները զարգացնելու համար նպատակահարմար է կատարել *խմբային աշխատանք* ելնելով թեմայից ու պատմական դեպքերից: Դասարանը բաժանվում է 4-հոգանոց խմբերի ու յուրաքանչյուր խմբի տրվում է թերթիկներ, որոնց վրա գրված են հարցեր ելնելով ուսումնասիրվող պատմական դեպքերից: Յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է պատասխանը, վերջում կատարվում է վերլուծություն-ամփոփում: Անհրաժեշտ է խմբային աշխատանքի մեջ ներգրավել բոլորին և հարցումներ անել բոլոր աշակերտներին:

2. Խմբերի հետ պատմական նյութից ելնելով հնարավոր է կազմակերպել դերային խաղ: Դերային խաղի համար ցանկալի է ընտրել հետաքրքիր և տարբեր տեսակետներ ունեցող թեմաներ, մասնակիցները կարող են ներկայացնել պատմական որևէ տարբեր տեսակետներ ունեցող դերեր: օրինակ հայոց թագավորների, սպարապետների կերպարներ,պատմական որևէ ժամանակշրջան:

3. Պատմության դասաժամին կարևոր է նաև ուսուցման դիդակտիկ մեթոդների կիրառումը, այն է համապատասխան նկարների ու քարտեզների օգտագործում, ինչպես նաև տեխնիկական միջոցներիայն է դիաֆիլմերի ու մագնիտոֆոնային ձայնագրությունների կիրառում և իհարկե համակարգչային տեխնիկայի

օգտագործում, որը շատ արդյունավետ է և ունի լայն ու բազմաբովանդակ հնարավորություն: Համակարգիչով ցույց է տրվում և դասի վերաբերյալ նկարներ , և պատմության տարեթվեր, անգամ որևէ հատված պատմական այս կամ այն դեպքերից ու իրադարձություններից սլայդների ձևով:/ պրեզենտացիա/: Կարևոր է նաև համակարգիչով պատմության դասի վերաբերյալ որևէ ֆիլմի դիտումը:

4. Սովորողների առաջադիմության ստուգման համար տրվում են թեստեր կիսամյակի վերջում, ուսումնական տարվա ավարտին կամ յուրաքանչյուր թեմայի ուսուցման վերջում՝ ստուգելու համար նյութի յուրացման մակարդակը և աստիճանը: Այդ թեստերը լինում են կիսամյակային ամփոփիչ, տարեվերջյան ամփոփիչ և ուսուցանվող/ձևավորող/ թեստեր:

Պատմության դասի յուրացման ամրապնդման համար կարևոր է օգտագործել ուսուցչի կողմից կազմված կամ արդեն առկա թեստային առաջադրանքներ, որոնք ընդգրկում են պատմական կարևորագույն դեպքերն ու թվերը և քաղաքական գործիչների անունները, դասի թեմաներ և այլն:

5. Դասագրքով աշխատելիս աշակերտը ոչ միայն պետք է կարողանա վերարտադրել կամ սերտել ուսուցվող թեման, այլև ցանկալի է որ նա համադրի դեպքերն ու փաստերը, ստեղծի կապ անցածի ու ներկայի հետ: Ուստի անհրաժեշտ է աշակերտներին հանձնարարել կազմել տրամաբանական սխեմա/ մոդուլ, դիագրամմա, աղյուսակ և այլն/ ու ինքնուրույն համառոտագրություն տետրում:

6.Շատ կարևոր է որ աշակերտները անպայման ունենան պատմության տերմինների, հասկացությունների տետր, որով ամրապնդվում է նոր դասի յուրացումը:

7.Անհրաժեշտ է նաև աշակերտներին հանձնարարել գրել ռեֆերատներ պատմության թեմաներով՝ օգտագործելով և գրքերը և նաև համակարգիչը: Օրինակ՝«Հայերի մասնակցությունը մեծ հայրենական պատերազմին» դասի շուրջ գրել ռեֆերատներ՝ «Մոնթե Մելքոնյան» կամ «Հարսանիքը լեռներում » և այլնթեմաների շորջ : Դա տալիս է աշակերտներին ինքնուրույն աշխատելու,

վերլուծելու, դասագրքից դուրս ավելի լայն գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն:

Մեթոդները բազմազան են և դրանք պետք է միտված լինեն աշակերտին սովորեցնեն վերլուծել, ինքնուրույն մտածել և դաստիարակվել ազգային արժեքներով:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով հետազոտության արդյունքները հանգեցին հետևյալ եզրահանգումներին:

- Անհատի զարգացումը կախում ունի ազգերի, իսկ վերջիններիս զարգացումն էլ' մարդկության զարգացման աստիճանից: Հայեցի դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներ չյուրացրած հայը չի կարող իր ազգի լիարժեք անդամը լինել: Ահա թե ինչու հայ դպրոցի, առհասարակ, հայեցի դաստիարակության կարևորագույն խնդիրն է ապահովել ազգայինի և համամարդկայինի միաձուլումը:
- Որպես կենսափորձ, ամեն մի ազգի պատմությունը յուրահատուկ է: Եվ հենց այդ յուրահատկությամբ Հայոց Պատմությունը պիտի դասավանդվի ազգային դպրոցում: Ըստ որում, Հայոց Պատմությունը հայ երեխաների համար պետք է լինի ոչ թե լոկ գիտելիքների աղբյուր, այլ՝ ազգային կենսափորձի յուրացման աղբյուր:
- «Հայոց պատմություն» առարկան դասավանդվում են առարկայական չափորոշիչների, ուսումնական պլանի և դասագրքերի հիման վրա: Ըստ այդմ, առարկան գլխավորապես միտված են ազգային և հայրենասիրական նպատակների իրագործմանը:
- 9-րդ դասարանում ներառված թեմաները մեծ ազդեցություն ունեն նաև ներկա սերնդի բարոյահոգեբանական վիճակի վրա, քանի որ այդ իրադարձությունները տեղի են ունեցել ոչ վաղ անցյալում և կապված են նրանց ներկայի հետ:
- 9-րդ դասարանում «Հայոց պատմություն» առարկայի շրջանակներում կիրառվող մեթոդները սովորեցնում են պատանիներին ինքնորույն մտածել, վերլուծել, բանավիճել՝ նպատակ ունենալով ամրապնդել ազգայի արժեհամակարգը:

Օգտագործված գրականություն և աղբյուրներ

1. Գևորգյան Էդիկ, Կարեն Խաչատրյան, Ամատունի Վիրաբյան, Հայոց պատմություն. 9-րդ դասարան, 2019, Երևան
2. Լփնասյան , Մանկավարժական հիմունքներ, Թավրիզ, 1991,420 էջ:
3. Մանուկյան Ս., Ստավոր գործունեության ձևերը կրթության բովանդակության կազմում, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2000, 79 էջ:
4. Սարգսյան Ա. Հ., Մշակույթի տեսություն, Եր., 2003, էջ 29
5. И. К. Кучмаева, Культурное наследие. Современные проблемы, М., 1987, с.12.
6. www.Grandars.ru/socologiya/swcologiya-Dyukgema.html.
7. https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf
8. https://escs.am/files/files/2020-07-17/a266911a693f809df0b4aa3175b0bcdb.pdf